ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 01-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62–րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի առաջին հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ **կողմ- 15** **դեմ- 0** **ձեռնպահ-0**

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**
6. **Անդրեասյան Հայրապետ**
7. **Առաքելյան Արմեն**
8. **Մակարյան Մարյամ**
9. **Մելքոնյան Հակոբ**
10. **Պողոսյան Արմինե**
11. **Սեփխանյան Սևան**

12. Առաքելյան Մարինե
13. Միրզախանյան Վարդան
14. Մարկոսյան Սեյրան
15. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 15
Արաքս համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 15-ի N 01-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1.ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

8. ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ՝ 2023Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

10. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

11.«ԼՈՒՅՍԻ ԿԱՆՉ» ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0112 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

13. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉԱՐՔԱՋ ԱՎԴՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0,038 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

14. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1,35 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,0156 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0316 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,2744 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

18.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N48-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 02-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավորվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի ազատ մնացորդը՝ 630924,0հազար դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 199-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝ **կողմ- 15** **դեմ- 0** **ձեռնպահ-0**

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**
6. **Անդրեասյան Հայրապետ**
7. **Առաքելյան Արմեն**
8. **Մակարյան Մարյամ**
9. **Մելքոնյան Հակոբ**
10. **Պողոսյան Արմինե**
11. **Սեփխանյան Սևան**
12. **Առաքելյան Մարինե**
13. **Միրզախանյան Վարդան**
14. **Մարկոսյան Սեյրան**
15. **Աբասյան Արայիկ**

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 15
Արաքս համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 15-ի N 02-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 630924,0 հազար դրամ, որից վարչական բյուջե՝ 293821,5 հազար դրամ, ֆոնդային բյուջե՝ 337102,5 հազար դրամ, որից սուբվենցիա 76035,7 հազար դրամ:

Վարչական բյուջեից 5726,6 հազար դրամ հատկացնել նախորդ տարիների պարտքի մարման համար:

Վարչական բյուջեից 288094,9 հազար դրամը ուղղել ֆոնդային բյուջե:

Ֆոնդային բյուջեից 39508,1 հազ. դրամ և սուբվենցիայի 76035,7 հազ. դրամը հատկացնել նախորդ տարիների պարտքի մարման:

Հաստատել՝ վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը՝ 5726,6 հազար դրամ,

ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 625197,4 հազար դրամ:

1. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացումները ավելացնել 220517,1 հազար դրամ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. **01. 1. 1-ի (Արաքսի համայնքապետարանի)**

1) 5113 հոդվածին ավելացնել 15595,0 հազար դրամ/14850,0 սուբվենցիա, 245,0 հազ. դրամ ն.տ.պ/
2) 4264 հոդվածին Ն.տ.պ. ավելացնել 74,0 հազար դրամ
3) 4239 հոդվածին Ն.տ.պ ավելացնել 30.6 հազար դրամ
4) 5122 հոդվածին ավելացնել 15496,0 հազար դրամ/7559,2 հազ. դրամ ն.տ.պ/
5) 5411 հոդվածին Ն.տ.պ. ավելացնել 200,0 հազար դրամ
6) 5121 հոդվածին ավելացնել 2000,0 հազար դրամ
7) 5134 հոդվածին ավելացնել 504.0 հազար դրամ
8) **2. 1. 6. 1-ի (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ)**

1) 5112 հոդվածին ավելացնել 5241,8 հազար դրամ/սուբվենցիա ն.տ.պ/

2) 4241 հոդվածին ն. տ. պ ավելացնել 510.0 հազար դրամ

3) 4657 հոդվածին Ն.տ.պ ավելացնել 4050,0հազար դրամ

3. 4. 3. 2-ի (Նավթամթերք և բնական գազ)

1) 5112 հոդվածին ավելացնել 203337,4 հազար դրամ /3288,0 սուբվ. ն.տ.պ./

4. 04.2.4 **ի (Ոռոգում)**

1. 5112 հոդվածին ավելացնել 99665,9 հազար դրամ/63665,9հազ. դրամ սուբվ. /1936,0 ն.տ.պ սուբվ./

5. 4.5.1 ի (Ճանապարհային տնտեսություն)

1) 5112 հոդվածին ավելացնել 103061.0 հազար դրամ

2) 5134 հոդվածին ավելացնել 1000.0 հազար դրամ

6. 9. 1. 1-ի (Նախադպրոցական ուսուցում)

1) 5113 հոդվածին ավելացնել 127478.2 հազար դրամ/85978.2 սուբվ. /60523.1 ն.տ.պ//
2) 5112 հոդվածին ն.տ.պ ավելացնել 8514,0 հազար դրամ / 3514,0 սուբվ./
3) 5122 հոդվածին ավելացնել 9500.0 հազար դրամ
4) 5134 հոդվածին ն.տ.պ ավելացնել 6000,0 հազար դրամ

7. 6. 3. 1-ի (Ջրամատակարարում)

1) 5112 հոդվածին ավելացնել 54789,1հազար դրամ / 9278,9 ն.տ.պ/, /574,2/սուբվ ն.տ.պ/
2) 5122 հոդվածին ավելացնել 3000,0 հազար դրամ
3) 4269 հոդվածին ն.տ.պ ավելացնել 832,5 հազար դրամ

8. 6.4.1-ի (Արտաքին լուսավորություն)

1) 4269 հոդվածին ն. տ.պ ավելացնել 229,5 հազար դրամ

9. 8. 2. 3-ի (մշակույթի տներ, ակումբներ)

1) 5113 հոդվածին ավելացնել 174316,1 հազար դրամ/167,0 հազ. դրամ ն.տ.պ/, /118482,1 սուբ./
2) 5134 հոդվածին ն.տ.պ ավելացնել 1395,0 հազար դրամ

10. 5. 1.1-ի (Աղբահանություն)

1) 5122 հոդվածին ավելացնել 4000,0 հազար դրամ

11. 8.1.1-ի (Հանգստի և սպորտի ծառայություններ)

1) 5113 հոդվածին ավելացնել ն.տ.պ 5458,0 հազար դրամ /958,0 հազ. դրամ սուբ. ն.տ.պ/

2) 5112 հոդվածին ն.տ.պ ավելացնել 563,0 հազար դրամ

3) 5134 հոդվածին ն.տ.պ ավելացնել 3600.0 հազար դրամ

4) 5122 հոդվածին ավելացնել 1000,0 հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 03-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի բյուջեի կատարման 2023 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝ **կողմ- 15** **դեմ- 0** **ձեռնպահ-0**

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**
6. **Անդրեասյան Հայրապետ**

7. Առաքելյան Արմեն

8. Մակարյան Մարյամ

9. Մելքոնյան Հակոբ

10. Պողոսյան Արմինե

11. Սեփխանյան Սևան

12. Առաքելյան Մարինե

13. Միրզախանյան Վարդան

14. Մարկոսյան Սեյրան

15. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 15
Արաքս համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 15-ի N 03-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ				
Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՊԼԱՆ /հազ. դրամ/	ՓԱՍՏԱՑԻ /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
1	Հողի հարկ	11248.3	30020.3	266.9
2	Գույքահարկ շենք և շինությունների	2624.6	3665.2	139.6
3	Անշարժ գույքի հարկ	98623.1	76321.8	77.4
4	Գույքահարկ փոխադրամիջոցների	157781.2	171719.8	108.8
5	Տեղական տուրքեր	7765.8	10828.6	139.4
6	Պետական բյուջեից դոտացիա	667708.4	668493.3	100.1
7	Հողերի վարձակալությունից մուտքեր	11067.8	11958.8	108.1
8	Գույքի վարձակալությունից մուտքեր	2699.5	4055.0	150.2
9	Ինքնակամ կառուցված շենքերի օրինականացման համար		260.9	0.0
10	Մուտքեր տույժերից , տուգանքներից	0.0	3241.8	0.0
11	Տեղական վճար	63863.6	77078.4	120.7
12	Այլ եկամուտներ	500.0	15169.9	3034.0
13	Սուբվենցիա	573651.9	585493.8	102.1
14	Նվիրատվություններ	0.0	0.0	0.0

15	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հաս	0.0	0.0	0.0
16	Տարեսկզբի ազատ մնացորդ վ/բ	0.0	0.0	0.0
17	Տարեսկզբի ազատ մնացորդ ֆ/բ	0.0	0.0	0.0
18	ԸՆԴԱՄԵՆԸ	1597534.2	1658307.6	103.8
19				
20	Սեփական եկամուտներ	356173.9	403609.7	113.3
21				
22	Մնացորդը 31.12.2023թ.	630924.0		
	որից՝ վարչական բյուջե	293821.5		
	ֆոնդային բյուջե	261066.8		
	սուբվենցիա	76035.7		

ԾԱԽՍԵՐ

2023թ,				
Հ/Հ	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ	ՊԼԱՆ /հազ. դրամ/	ՓԱՍՏԱՑԻ /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
1	Տեղական ինքնակառավարում	372958.1	296599.6	79.5
2	Ընդհանուր բնույթի ծառայություններ	6000.0	1195.2	19.9
3	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	61652.0	51653.5	83.8
4	Կառավարության տարբեր մակարդակներից	0.0	0.0	0.0
5	Գյուղատնտեսություն	8020.0	7014.8	87.5
6	Ոռոգում	87153.8	71563.3	82.1
7	Նավթամթերք և բնական գազ	156470.1	34943.4	22.3
8	Ճանապարհային տրանսպորտ	58600.0	16282.4	27.8
9	Աղբահանություն	92400.0	87146.3	94.3
10	Ջրամատակարարում	228242.0	200665.2	87.9
11	Փողոցների լուսավորում	35769.6	15454.0	43.2
12	Առողջապահական հարակից ծառայություններ	0.0	0.0	0.0
13	Հանգստի և սպորտի ծառայություններ	37660.0	26545.8	70.5
14	Գրադարաններ	4060.0	4059.0	100.0
15	Մշակույթի տներ , ակումբներ	168465.8	119072.3	70.7
16	Այլ մշակույթային ծառայություններ	26000.0	11871.4	45.7
17	Հուշարձանների վերականգնում և պահպանում	950.0	948.9	99.9
18	Նախադպրոցական ուսուցում	667943.1	594309.0	89.0
19	Արտադպրոցական ուսուցում	22800.0	22800.0	100.0
20	Սոց. օգնություն	30000.0	19009.5	63.4
21	Պահուստային ֆոնդ	62990.0	0.0	0.0
22	Տնտեսական հարաբերություններ	-110206.0	-133355.6	121.0
	ընդամենը	2017928.5	1447778.0	71.7

ԾԱԽՍԵՐ

2023թ					
Հ/Հ	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ	ՀՈԴՎԱԾ	ՊԼԱՆ /հազ. դրամ/	ՓԱՍՏԱՑԻ /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
1	Աշխատավարձ	4111	290727.0	244135.3	84.0
2	Պարգևատրում	4112	10000.0	8902.0	89.0
3	Էներգետիկ ծառայություններ	4212	44000	29332.4	66.7
4	Կոմունալ ծառայություններ	4213	50100	47958.2	95.7
5	Կապի ծառայություններ	4214	3000	2122	70.7
6	Ապահովական ծառայություններ	4215	300	186.9	62.3
7	Ներքին գործուղում	4221	2000	1756.3	87.8
8	Համակարգչային ծառայություններ	4232	3426.7	2724	79.5
9	տեղեկատվական ծառայություններ	4234	1000	869.4	86.9
10	Ներկայացուցչական ծառայություններ	4237	22751	13380.5	58.8
11	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	72450	46469.5	64.1
12	Մասնագիտական ծառայություններ	4241	10774	5560.9	51.6
13	Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում	4251	26455	11215.8	42.4
14	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	2500	749	
15	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	3000	2876.5	95.9
16	Տրանսպորտային նյութեր	4264	6574	2612.1	39.7
17	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	1120.3	1073.7	95.8
18	Հատուկ նպատակային նյութեր	4269	55069.6	28853.9	52.4
19	Սուբսիդիաներ	4511	206200	190522.7	92.4
20	Ընթացիկ դրամաշնորհ	4637	5950	5849.4	98.3
21	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	1300	1300	100.0
22	Այլ կապիտալ դրամաշնորհ	4657	21645	20534.1	94.9
23	Այլ նպաստներ բյուջեից	4729	30000	19009.5	63.4
24	Պարտադիր վճարներ	4823	1600	1598.5	99.9
25	Պահուստային միջոցներ	4891	62990	0	0.0

26	Շենքերի և շինությունների կառուցում	5112	486155.1	340813.1	70.1
27	Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում	5113	608480.8	488393.6	80.3
28	Տրանսպորտային նյութեր	5121	2000	1630	81.5
29	Վարչական սարքավորումներ	5122	47500	39407.3	83.0
30	Նախագծահետազոտական ծախսեր	5134	47066	19297	41.0
31	Հողի ձեռք բերում	5411	2000	2000	100.0
32	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	8131	0	-1729	0.0
33	Հողի իրացումից մուտքեր	8411	-110206	-131626.6	119.4
			2017928.5	1447778.0	71.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 04-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34–րդ հոդվածի 1–ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին» N 183-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ կողմ- 15 դեմ- 0 ձեռնպահ-0

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**

6. Անդրեասյան Հայրապետ

7. Առաքելյան Արմեն

8. Մակարյան Մարյամ

9. Մելքոնյան Հակոբ

10. Պողոսյան Արմինե

11. Սեփխանյան Սևան

12. Առաքելյան Մարինե

13. Միրզախանյան Վարդան

14. Մարկոսյան Սեյրան

15. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 15
Արաքս համայնք

Հավելված

Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու

2023 թվականի նոյեմբերի 13-ի N 183-Ա որոշման

Հավելված

Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու

2024 թվականի փետրվարի 15-ի N 04-Ա որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՑԱՆԿ

N	Հայտի անվանումը	Ենթածրագրի անվանումը
1.	ՀՀ Արմավիր մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի ոռոգման համակարգի կառուցում, Առատաշեն գյուղի ոռոգման ցանցի կառուցում և Լուսագյուղ գյուղի ոռոգման ցանցի կառուցում	Արաքս գյուղի ոռոգման համակարգի կառուցում
		Առատաշեն գյուղի ոռոգման ցանցի կառուցում
		Լուսագյուղ գյուղի ոռոգման ցանցի կառուցում
2.	ՀՀ Արմավիր մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 700մ երկարությամբ 7-րդ, 15-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ և Արաքս գյուղի Ռաֆֆու փողոցի 200 մ երկարության ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ	Ապագա գյուղի 700մ երկարությամբ 7-րդ, 15-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ
		Արաքս գյուղի Ռաֆֆու փողոցի 200 մ երկարության ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ

3.	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի կենտրոնական այգու բարեկարգում, Գայ գյուղում գտնվող եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում և Արաքս գյուղի մշակույթի տան հարակից տարածքի բարեկարգում	Գայ գյուղի կենտրոնական այգու բարեկարգում, Գայ գյուղում գտնվող եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում
		Արաքս գյուղի մշակույթի տան հարակից տարածքի բարեկարգում
4.	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի կենտրոնական այգու բարեկարգում և Արտիմետ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում	Գրիբոյեդով գյուղի կենտրոնական այգու բարեկարգում
		Արտիմետ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում
5.	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ, Արաքս բնակավայրի Բաղրամյան, Զ.Անդրանիկ և Գ.Նժդեհ փողոցների գազաֆիկացման աշխատանքներ	Հայկաշեն բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ
		Արաքս բնակավայրի Բաղրամյան, Զ.Անդրանիկ և Գ.Նժդեհ փողոցների գազաֆիկացման աշխատանքներ
6.	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի խմելու ջրամատակարարման համակարգի վերակառուցում, Հայկաշեն գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում և Արաքս գյուղի ջրահեռացման համակարգերի վերակառուցում	Հայկաշեն գյուղի խմելու ջրամատակարարման համակարգի վերակառուցում, Հայկաշեն գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում
		Արաքս գյուղի ջրահեռացման համակարգերի վերակառուցում
7.	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, Ջրարբի գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում, Լուսագյուղ գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում, Գայ գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում, Գայ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցում, Մեծամոր գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում	Ջրառատ գյուղի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում
		Ջրարբի գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում
		Լուսագյուղ գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում
		Գայ գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում, Գայ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցում
		Մեծամոր գյուղի ջրահեռացման համակարգի վերակառուցում

8.	ՀՀ Արմավիր մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի նոր սպորտային համալիրի կառուցում և Արաքս գյուղի մշակույթի տան առաջին հարկի վերանորոգում	Խորոնք գյուղի նոր սպորտային համալիրի կառուցում
		Արաքս գյուղի մշակույթի տան առաջին հարկի վերանորոգում
9.	ՀՀ Արմավիր մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի մշակույթի տան տանիքի վերանորոգում, Ակնաշեն գյուղի մշակույթի տան վերանորոգում, գ. Գայ, Սարյան փողոցի թիվ 3 մշակույթի տուն հասցեում համայնքի մշակույթի տան 1-ին հարկի կապիտալ նորոգում և Արտիմետ վարչական ղեկավարի նստավայրի շենքի վերանորոգում	Մեծամոր գյուղի մշակույթի տան տանիքի վերանորոգում
		Ակնաշեն գյուղի մշակույթի տան վերանորոգում
		գ. Գայ, Սարյան փողոցի թիվ 3 մշակույթի տուն հասցեում համայնքի մշակույթի տան 1-ին հարկի կապիտալ նորոգում
		Արտիմետ վարչական ղեկավարի նստավայրի շենքի վերանորոգում
10.	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում, Ջրարբի գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, Մեծամոր գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, Գրիբոյեդով գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում, Հայկաշեն գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում, Լուսագյուղ գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում	Արտիմետ գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
		Ջրարբի գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում
		Մեծամոր գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում
		Գրիբոյեդով գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում
		Հայկաշեն գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում
		Լուսագյուղ գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի բակի բարեկարգում
11.		Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցում

	ՀՀ Արմավիր մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցում և սալարկում, Առատաշեն գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի սալարկում	Առատաշեն գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրի սալարկում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ « ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի « Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝ կողմ- 15 դեմ- 0 ձեռնպահ-0

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**
6. **Անդրեասյան Հայրապետ**

7. Առաքելյան Արմեն

8. Մակարյան Մարյամ

9. Մելքոնյան Հակոբ

10. Պողոսյան Արմինե

11. Սեփխանյան Սևան

12. Առաքելյան Մարինե

13. Միրզախանյան Վարդան

14. Մարկոսյան Սեյրան

15. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 15
Արաքս համայնք

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի
15-ի թիվ 05-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի (այսուհետ՝ համայնք) «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն:
2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Համայնքի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդես է գալիս Արաքս համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):
3. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման /պետական գրանցման/ և դադարում է լուծարման ավարտի /լուծարման պետական գրանցման/ պահից:
4. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացնող այլ միջոցներ:
5. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով /այսուհետ՝ Օրենսգիրք/, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ՝ Օրենք/, Հայաստանի հանրապետության այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
6. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
7. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:
8. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,
2) հայերեն կրճատ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ,
3) ռուսերեն լրիվ՝ Общинная некомерческая организация "Коммунальное обслуживание и благоустройство ОБШИНЫ АРАКСА" общины Аракс Армавирской области Республики Армения
4) ռուսերեն կրճատ՝ ОНО "Коммунальное обслуживание и благоустройство обшины Аракса"Обшины Аракс Армавирской области РА
5) անգլերեն լրիվ՝ " Araks utility service and improvement" Community Non-Commercial Organization of Araks Community of Armavir Region of the Republic of Armenia.

6) անգլերեն կրճատ՝ " Araks utility service and improvement" CNCO of Araks

Community of Armavir Region of the Republic of Armenia:

9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, Ա. Խաչատրյան 1:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպության ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի բարեկարգումը և դրան ուղղված ծառայությունների իրականացումը:
11. Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակներն են ՝
1) Աղբահանության և սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում
2) Անձրևաջրատար ցանցերի շահագործում, ընթացիկ նորոգում և պահպանում
3) Գերեզմանատների պահպանում
4) Համայնքի բնակչության կենսապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացում
5) Օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացում
12. Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Կազմակերպությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ՝ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

13. Կազմակերպության կողմից կարող են ծառայություններ մատուցվել, աշխատանքներ կատարվել, ապրանքներ գնվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
15. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտակությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր ձեռք բերել ու իրականացնել գուքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
16. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):
17. Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադրի որոշմամբ:
18. Կազմակերպությունն իրավունք ունի հիմնադրի որոշմամբ ստեղծել կառուցվածքային ստորաբաժանումներ: Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Կազմակերպության տնօրենի կողմից տրված լիազորագրերի հիման վրա:
19. Կազմակերպությունն իրավունք ունի Հիմնադրի որոշմամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտեր կամ այլ օգտակար արդյունքը,

2) ինքնուրույն կազմավորել իր ֆիանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ,

3) Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր,

4) հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը,

5) մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,

6) օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

7) օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկությունները և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

8) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

20. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

21. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,

2) աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,

3) պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից արած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

4) օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,

5) հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

6)ապահովել Կազմակերպության փաստաթղթերի՝ (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

5) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

22. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի

23. Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի՝

1) Հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը / այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները /

2) Կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները,կարգադրություններն ու ցուցումները

3) Վերահսկողություն իրականացնել կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ

4) Հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել Օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

24. Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է ՝

1) Ապահովել կազմակերպության բնականոն գործունեությունը
2) Չհրապարակել կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ
3) Կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
4) Պահպանել սույն կանոնադրության դրույթները

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

25. Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր՝
1) Կազմակերպության հիմնադրի կողմից /հիմնադրման ժամանակ և հետագայում/ սեփականության իրավունքով հանձնված գույքի
2) Կազմակերպության գործունեության հետևանքով կատարած աշխատանքի և ձեռքբերված գույքի: Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:
26. Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:
27. Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը: Կազմակերպությունն իրավունք ունիիրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել:Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են: Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:
28. Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
29. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների/ Կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, Կազմակերպության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում,պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով կազմակերպության աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում և այլն/ իրականացման համար:Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ Կազմակերպության հիմնադիրը՝ համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը և տնօրենը:

31. Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

32. Կազմակերպության հիմնադիրը ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

33. Կազմակերպության հիմնադրի՝ համայնքի ավագանու իրավասությանն են պատկանում՝

1) Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների լրացումների և լրացումների կատարումը. Կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) Կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,
3) Կազմակերպության ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,
4) Կազմակերպության վերակազմակերպումը,
5) Կազմակերպության լուծարումը,
6) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,
7) այլ կազմակերպությունների հիմնադրումը,
8) այլ կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը,
9) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների սահմանումը,
10) Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակցված այլ գործարքների հետ միասին, գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության 1/2-ը) կատարելուն համաձայնություն տալը,
11) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
12) Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Կազմակերպության ներքին փաստաթղթեր) ընդունումը,
13) Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը,

Կազմակերպության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

34. Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ըստ անհրաժեշտության՝ հանդես է գալիս հիմնադրի անունից,

բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) Հիմնադրի որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Կազմակերպության ընթացիկ տնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է **Համայնքի ղեկավարը**: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի: Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության և Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում՝ Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:
Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Կազմակերպության Հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերից: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպության, Հիմնադրին պատճառած վնասի համար, ընդ որում տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառում վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

Հիմնադիրը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Հաստատության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

36. Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.
2) տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
5) բացում է հաշիվներ բանկում
6) կատարում է աշխատանքի բաշխում.
7) սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

8) հաստատում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր
9) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
10) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

62. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Հաստատությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

8. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

37.Կազմակերպությունը, նրա Հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

38.Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
Եթե լուծարվող Կազմակերպությունը գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:
39.Կազմակերպությունը իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային (Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի) մասնակցությամբ ընկերության:
40.Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի բյուջե:
41.Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 06-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ի մասի 28-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի « Արաքս համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝ **կողմ- 15** **դեմ- 0** **ձեռնպահ-0**

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**
6. **Անդրեասյան Հայրապետ**

7. Առաքելյան Արմեն

8. Մակարյան Մարյամ

9. Մելքոնյան Հակոբ

10. Պողոսյան Արմինե

11. Սեփխանյան Սևան

12. Առաքելյան Մարինե

13. Միրզախանյան Վարդան

14. Մարկոսյան Սեյրան

15. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ

2024 թվականի փետրվարի 15
Արաքս համայնք

Հավելված 1

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի
ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 06-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Աշխատակիցների քանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 9,5

N	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորի թիվը	Մեկ հաստիքի դրույքաչափը ՀՀ դրամ	Մեկ աշխատողի դրույքը	Մեկ աշխատողի ամսական աշխատավարձը ՀՀ դրամ	Լրավճար՝ Յուրաքանչյուր աշխատած 1 ժամվա համար
1	Տնօրեն	1	250000	1	250000	x
2	Հաշվապահ	0,5	54362	0,5	54362	x
3	Էքսկավատորավար	1	240000	1	240000	
4	Էքսկավատորավար	1	230000	1	230000	
5	Ինքնաթափի վարորդ	1	230000	1	230000	
6	Մինի ամբարձիչի վարորդ	1	220000	1	220000	
7	Տրակտորավար	1	220000	1	220000	
8	Փականակագործ եռակցող	1	200000	1	200000	x
9	Բանվոր	1	160000	1	160000	x
	Ընդամենը	9,5	**1804362**	9,5	**1804352**	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2024 թվական N 07-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արաքս համայնքի 2024թ-ի բյուջեում հատկացնել 5 000 000 / հինգ միլիոն /ՀՀ դրամ գումար՝ 2024թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

